Դեղ կրօնաւորը ՈԿԹ (= 1220) թուին Ս. Նշանի յետեը կանգնել է մի խաչքար «աւգնականութիւն. Գրիգոր վարդապետի», «ի բարեխաւսութիւն.» իւր Ցովսէփ եղբօրը, որ կուսակրօն քահանայ էր և Երուսաղէմից դարձին «խողխողեցաւ սրով յայլազգեաց» (Ցաւել. Ա. 50)։

Նոյն թուին է շինուել բուն վանքերի խմբից քիչ դէպի արևմուտք փոքրիկ, բայց սիրուն եկեղեցին Ս. Ցարութիւն անունով (պատկ. 127, 128), շինութեան արձանագրութիւնը գտնւում է տաճարի արևմտեան դրան գլխին, իւրատեսակ գաւթի ներսը.

Թիւ : ՈԿԹ : շենե|ցաւ սբ. Ցարութիւնս առ|
ի յիշատակ համաւրէն նընչ|եցելոց ի Քս. եւ
ծնողաց իւրո|
ց Հասանայ եւ Ռուզուքանայ (զ–ն կոտ-
րած) եւ զաւակաց . . . |
. . . . . | . . . . ել եւ |
արձան աւրհնութեա. սիրոյն որ առ Ա.ծ. եւ
առ սբս. նորա. ամէն.(*)

Ո՞վքեր են այստեղ յիշուած Հասանն ու Ռուզուքանը։ Այս հարցի պատասխանը լուծում է Գեղարդի վանքի մի արձանագրութիւն (Ցաւել. Ա. 78), որից երևում է, թէ Սմբատ թագաւորազնի թոռը և Վաղթանկի որդի Հասանը իւր տուած նուէրների փոխարէն ստացել է տաս պատարագ, հինգն իրեն, «Գ: իմ մաւրն Նանային։ Բ: Ռուզուքանա կենակցի իմոյ»։ Արձանագրութիւնը թուական չունի, իսկ վանքը շինուած է 1215 թուին, երբ պիտի գրուած լինի մօտաւորապէս և այս արձանագրութիւնը. 1220 թուին արդէն վախճանուած են նրանք, որոնց յիշատակին եբախտագէտ որդին նուիրում է այս փոքրիկ տաճարը։ Ինդիրն աւելի ևս պարզւում է Դատի վանքի մի արձանագրութեամբ՝ գրուած վերոյիշեալ Վաղթանկի (**) եւ իւր կնոջ Նանայի կողմից, նաեւ Վաղթանկի հօր Սմբատ թագաւորազնի յիշատակութեամբ. տարաբաղտաբար մեզ չէ յաջողուել գտնել Կեչառիսի այս փոքրիկ եկեղեցու շինողի և զաւակների անունները։

Մի վերջին արձանագրութիւն ևս ունինք Գրիգոր վարդապետի օրով. ոմն Սարգիս՝ «կրաւնաւոր ի վանաց Գետկայ» նուէր է տալիս իւր կարողութեան չափ, Գրիգոր վարդապետը եւ միաբանները մի պատարագ են յատկացնում Ս. Սարգսի տօնին (Ցաւել. Ա. 51)։

Մի տարի յետոյ թաղուել է այստեղ Եարէք անունով մէկը, Լաւշքարէի եղբայրը, մեծ տաճարի հարաւային կողմը՝ դրան առաջ՝ գերեզմանաքարի արձանագրութեան համեմատ. «Այս է հանդիս|տ Եարէքին եղբա|ւր Լաւշքարէ | յիշեսցիք ի | յաղաւթս ի|թու ՈՀ.»։

Արդեօ՞ք կենդանի էր Գրիգոր վարդապետը, երբ պատրոն Վաչէն 1222 թուին նորոգեց Ս. Նշանի մատուռը (պատկ. 126, Ցաւել. Ա. 44), ասել չենք կարող։ Այս պատրոն Վաչէն չպէտք է նոյնացնել Վաչուտեան Վաչէի, Մամախաթունի ամուսնու հետ (Ցաւել. Ա. 43), այլ ամենայն հաւանականութեամբ Երևանում բնակուող մի տոհմի ներկայացուցիչներ են, ինչպիսիք են «պատրոն Վարդ Երեւանս» (Ցաւել. Ա. 41), «Մխիթարիչ որդի Գրիգորի» իւրայիններով (Ցաւել. Ա. 45), գուցէ և Վարդըմբել (Ցաւել. Ա. 40), նաեւ Գեղարդի վանքի արձանագրութիւնների մէջ, Դոլ են.։

Գրիգոր վարդապետին յաջորդեց Ներսէս վարդապետ, ըստ Գանձակեցու «այր առաքինի և ողջախոհ». սա ևս մասնակից էր Անիի ժողովին։ Սորա օրով ոմն Սարգիս տալիս է իւր հոգու արդիւնքը սուրբ Գրիգորին՝ «յառաջնորդութե. Ներսէս վրդ.։ Վարդապետես եւ միաբանքս» տալիս են տարին երկու ժամ, մէկն իրեն և միւսը իւր ամուսնուն (Ցաւել. Ա. 52)։ Այս արձանագրութիւնից տեսնում ենք, որ նա միակ վարդապետը չէ, այլ գլխաւորն է միայն, որ վանքի կարևոր կեդրոն լինելն է ապացուցանում։

Ներսէսի յաջորդն էր Մխիթար վարդապետ, որի օրով Ամարասի Սարգիս և Վրթանէս եպիսկոպոսները միաբանում են Կեչառիսի սուրբ Լուսաւորչին եւ իրենց արդիւնքից 200 դահեկան նուէր տալիս. Մխիթար վարդապետը միւս վարդապետների և միաբանների հետ հարիւրը «ի ջաղացն անցուցաք : ՃՃ: ժամատուն» և սահմանում են տարին վեց պատարագ «ի տաւնի Թատակիսի եւ Վթի.։ Գ։ ՍԳ։ Գ. Վթ.» (Ցաւել. Ա. 53, պատկ. 129). արձանագրութիւնը գտնւում է ժամատան արևմտեան դրան և կամարակալ քարի վերայ և գրուած պիտի լինի մօտաւորապէս 1242 թուին, քիչ առաջ կամ յետոյ. երբ երկիրն սկսել էր բնականոն վիճակի մէջ մտնել Թաթարների նուաճողական արշաւանքից յետոյ, բայց ոչ ուշ քան 1246 թիւը, երբ մեռած էր արդէն Սարգիս եպիսկոպոսը։ Նոքա երկուսով հիմնարկել են Գաչոյ վանքը Ղարաբաղի Դիզակ գաւառում, որի խորանը խփելու ժամանակ՝ վախճանւում է Սարգիսը։ Արձանագրութիւնները ՈՂԵ (= 1246) թուին միայն Վրթա-

(*) Տե՛ս և Շահխաթունեան Բ. 197։ Ալիշան, Այր. 263։ Սմբատեան. Գեղարքունի. 354, թերի։ Լալայեան. Ազգագրական Հանդէս XXIII. 131։

(**) Այս Վաղթանկին չպէտք է շփոթել ոչ Ներքին Խաչենի իշխան, Խորիշահի (Զաքարէի և Իւանէի քոյր) ամուսին, Հասանի որդի Վաղթանկի հետ, որ Հասան-Ջալի հայրն էր, (Դանձակեցի 254. Վարդան 184. Բարխուդարեան, Արցախ 173). և ոչ Հաթերքի իշխան Արզուխաթունի ամուսնին և Հասանի որդի Վաղթանկի հետ, որ Դոշ Մխիթարի մեկենասն էր (Դատաստանագիրք. Բաստամեանի հրատ. եր 71-72։ Գանձ. 197, 203։ Վարդան. 184։ Բարխ. Արցախ 203։ Տես և Orpeli. Asangalal kniaz Khatchanski. Izvestia Academi Naouk. 406/7)։ Բայց սա ևս Խաչենի իշխաններից էր և Նրա կալուածները Դատի վանքից ոչ հեռու։